

կացութեան հիման վրա: Սահմանադրութեան հանձնաժողովին կ'անդամակցեր ծանոթ իրավագետ Գրիգոր Օտյանը:

Հստ թուրքական արխիվային փաստաթուղթերու վկայութեան, այդ նույն անձնավորութիւնն էր, որ Միտհաթ փաշայի թելադրութեամբ պատրաստած էր նաև առաջին թրքական պետական սահմանադրութեան կանոնադրքը, որ կը կոչվեր «Քանունը էսասի»:

Որպեսզի հնարավոր ըլլա մանրագնին կերպով ուսումնասիրել հայերու՝ թուրք մշակույթին և տնտեսութեան բերած բազմակողմանի և անժխտելի նպաստը, պետք է ձեռք առնել անոնց գործունեութեան բնագավառները:

Մենք այժմ կ'ուզենք ծանրանալ այդ բնագավառներին մեկուն՝ Օսմանեան կայսրութեան մեջ հայկական տպագրութեան արվեստին և թրքական տպագրութեան գործին հայերու բերած նպաստի վրա:

Օսմանեան կայսրութեան մեջ տպագրված առաջին թրքերեն գիրքը «Քիթաբը լյուկաթը վանքուլուն» է, որ 3 հունվար 1729 թ. լույս է տեսած Կ. Պոլսո մեջ: Այդ բառգիրքը տպված է 14/16 դեկտեմբեր 1727-ին, արքունի թիկնապահներին, հունգարական ծագում ունեցող Իբրահիմ աղայի ջանքերով հիմնված տպարանին մեջ: Գիրքի հրատարակութեանն մինչև այսօր անցած է 255 տարի:

Կարգ մը թուրք հետազոտողներ կը սխալին, երբ կը կարծեն, թե թուրքիո մեջ հիմնված առաջին տպարանը վերոհիշյալն է: Մինչդեռ իրականութիւնն է այն, որ նախապես կատարված որոշ նախաձեռնութիւններու արդյունք է թուրքիո մեջ հիմնված այդ տպարանը: Հետևաբար առանց երկար մանրամասնութիւններու միջամուխ ըլլալու, կը փափագինք կանգ առնել այդ շարժումներու մեկ մասի սկզբնավորութեան, զարգացումին և անոնց կատարած դերին վրա:

Թուրքիո մեջ տպագրական արվեստի ստեղծման համար ճանապարհ բացող գլխավոր գործողներ հանդիսացած են Եվրոպայի մեջ արաբական տառերով կատարված հրատարակութիւնները, եվրոպական լեզուներով թուրքերեն լեզվի քերականութեան և բառգիրքերու տպագրութիւնը, Եվրոպային Կ. Պոլիս բերված գիրքերու վաճառքը, ինչպես նաև Օսմանեան կայսրութեան սահմաններուն մեջ իրենց գոյութիւնը պահպանող հրեաները, հայերը և հույները և այլ տարրեր, որոնք իրենց լեզվով հրատարակութիւններ կատարելու համար տպարաններ հիմնած էին թուրքիո մեջ:

Պրոֆ. Ավրամ Կալանթին իր «Թուրքերն ու հրեաները» աշխատութեան մեջ կը գրե, թե Կ. Պոլսո մեջ առաջին տպարանը հիմնած են